7146

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 099-24

Նախաձեռնող՝ **Գագիկ Գրիգորյան**
ք. Երևան, Բագրատունյաց 14, բնակարան 77

Գործունեությունը՝ **Սառնարանային համալիրի կառուցում**
Արմավիրի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 099-24

«28» հունիսի 2024թ.

Փարաքար բնակավայրի Մերձավանի խճուղի 29 հասցեում սառնարանային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	Գագիկ Գրիգորյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Փարաքար բնակավայր, Մերձավանի խճուղի 29

Ներածական մաս. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Մերձավանի խճուղի 29 հասցեում Գագիգ Գրիգորյանի կողմից նախատեսում է կառուցել սառնարանային համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 26102023-04-0004, ծածկագիրը՝ 04-094-0005-0009, Փարաքար համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N 333, տրված՝ 15.12.2023 թ.:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Գործունեության տարածքի երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում մինչև 5,4 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն հատնաբերվել: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում՝ բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, ինչպես նաև կենդանիների բնադրավայրեր, միգրացիոն ուղիներ չեն

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հայտնաբերվել: Հողամասում առկա են շինություններ, որոնք ենթական չեն քանդման, ինչպես նաև պտղատու ծառեր՝ որոքն պահպանվելու են:

Նկարագրական մաս. Հողամասի մակերեսը կազմում է 1.5931 հա: Սառնարանային տնտեսության կազմակերպման համար կառուցապատման մակերեսը կազմում է 3024.0 մ²: Այն ընդհանուր տանիքածածկով, վերգետնյա միահարկ շինություն է, նախատեսված տարածաշրջանում աճեցվող գյուղատնտեսական բնամթերքների պահպանության համար: Շինության հատակագծումն ունի ուղղանկյունաձև տեսք՝ 42x72 մետր առանցքային չափերով: Կոնստրուկտիվ համակարգն իրականացվում է մետաղական կազմովի 15 կտրվածքի էլեմենտներով (սյուներ)՝ եզրերում 4.0 մետր, մեջտեղում՝ 7.2 մետր: Տանիքը երկթեք է, ծածկույթը՝ սենդվիչ սալերով՝ 10 սմ հաստությամբ: Պատերը նույնպես իրականացվում են սենդվիչ սալերով՝ 10 սմ հաստությամբ: Սառնարանային սարքավորումներում օգտագործվելու է ֆրեոն R 404A գազը, որը թունավոր չէ, ջրում և լուծիչներում չի լուծվում: R 404A ֆրեոնը դասվում է A1/A1 անվտանգության դասին: Ունի գլոբալ տաքացման ազդեցության նվազագույն ցուցանիշ, հանդիսանում է մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար ամենաանվտանգ սառեցնող միջոցը:

Կառուցապատվող սառնարանային համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 1.5931 հա:
- շենքի կառուցապատման մակերես՝ 3024.0 մ²:
- արտադրական հզորություն՝ 3000 տոննա:
- կանաչապատման մակերես՝ 605.0 մ²:
- ասֆալտբետոնե սպասարկման ճանապարհ՝ 60 մ²:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կառուցվելու են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ:

Համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն: Նախագծում ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումներընախատեսվել են՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի և համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվախ տեխնիկական պայմանների:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Շինարարության ընթացքում իրականացվելու 4611,70 մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 1127,70 մ³ օգտագործվելու է հետլիցքի համար: Օգտագործվելու է բերովի գրունտ՝ 5159,60 մ³՝ Փարաքարի համայնքապետարանի համաձայնությամբ: Բնառեսուրսներից օգտագործվելու է նաև ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության փուլում հակահրդեհային պաշտպանության նպատակով նախատեսվում է հակահրդեհային 5 տոննա տարողության ջրի բաք:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ 14570.3 մ³ ծավալով և կենցաղային թափոններ՝ կառուցապատման փուլում՝ 7776 կգ/տարի, շահագործման փուլում՝ 12600 կգ/տարի: Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պարկերի մեջ և տեղափոխվելու է Փարաքարի համայնքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1.5x1.0 մ³ աղբահավաք տարողությունների մեջ: Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման պլան՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պատճառաբանական մաս. Սառնարանային համալիրի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 605 մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատման համար կօգտագործվի հողային աշխատանքներիի ժամանակ հանված հողաբուսական շերտը՝ 61.0 մ³ ծավալով, որը շինարարության հողային աշխատանքների փուլում հավաքվելու և պահեստավորվելու է Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 02-ի N 1404-ն որոշման պահանջներին համապատասխան:

Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են Փարաքարի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի:
Շահագործման փուլում առաջացող տարբեր տեսակի և դասի վտանգավոր նյութերը կհավաքվեն հատուկ տարողությունների մեջ և պայմանագրային հիմունքներով կհանձնվեն լիցենզավորված կազմակերպությունների:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականցել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,

ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTRE
ՓՈՐՁԱՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Սառնարանային համալիրի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Փարաքար համայնքում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Փարաքար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում բարձրացվել են հարցեր սառնարանային տնտեսության արտադրողականության,սպասարկամն պայմանների, պահվող մթերքի տեսակների վերաբերյալ: Այդ հարցերի պարզաբանումները ներառվել են լրամշակված հայտում: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 12 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
2. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների

պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման 43-րդ կետի՝ որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

3. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Փարաքարի համայնքապետարանի հետ համաձայնեցված նախագծին համապատասխան:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Փարաքարի համայնքի հետ համաձայնեցված:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Շահագործման փուլում առաջացող թափոնները տարածքից հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան կազակերպությունների միջոցով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Գրիգորյանի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Մերձավանի խճուղի 29 հասցեում սառնարանային համալրիր կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն *Խաչիկ Մարտիրոսյան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ *Հերիքնազ Մկրտչյան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ *Սուսաննա Անտոնյան*